

ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր,
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՌՈՒԲԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
կիրառական հոգեբանության ամբիոն, հայցորդ*

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Կոնֆլիկտների հիմնախնդիրն արդիական է եղել բոլոր ժամանակներում: Մեր օրերում ևս կոնֆլիկտը ամենաբնորոշ երևույթներից մեկն է և արդեն ոչ ոքի պետք չէ ապացուցել կոնֆլիկտները հետազոտելու անհրաժեշտության փաստի գոյությունը: Կոնֆլիկտների առաջացման, դրանց արդյունավետ հաղթահարման հիմնախնդիրների վերաբերյալ մեծ հետաքրքրություն են դրսևորում ոչ միայն սոցիոլոգներն ու հոգեբանները, այլև քաղաքական գործիչները, ղեկավարները, մանկավարժները, սոցիալական աշխատողներն, այլ կերպ ասած՝ բոլոր նրանք, ովքեր իրենց գործունեությամբ կապված են մարդկային փոխհարաբերությունների հետ [1, էջ 10]: Խիստ հետաքրքրական է կոնֆլիկտաբանական խնդիրների միաձուլումը իրավաբանական գիտության հետ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. կոնֆլիկտ, իրավական հարաբերություններ, իրավական կոնֆլիկտներ, քննչական գործունեություն:

Կոնֆլիկտները առկա են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Բախումներն առանձնահատուկ դրսևորումներ են ունենում հատկապես իրավական հարաբերությունների դաշտում: Այս դեպքում մենք գործ ունենք իրավաբանական կոնֆլիկտի հետ: Իրավաբանական կոնֆլիկտը, լինելով հասարակական կոնֆլիկտի տարատեսակ, ունի մի

շարք առանձնահատուկություններ, որոնք էլ ուսումնասիրում է իրավաբանական կոնֆլիկտաբանությունը [2]: Իրավաբանական բառարանում իրավաբանական կոնֆլիկտաբանությունը մեկնաբանվում է իբրև գիտական նոր բնագավառ, ընդհանուր կոնֆլիկտաբանության բաժին, որի ուսումնասիրման առարկան այն կոնֆլիկտներն են, որոնք առաջանում, զարգանում ու հաղթահարվում են, ներքին (ազգային) կամ (միջազգային) իրավունքի շրջանակներում [3]: Իրավաբանական կոնֆլիկտաբանությունը սերտորեն համագործակցում է սոցիոլոգիայի, սոցիալական հոգեբանության, իրավաբանական գիտությունների ճյուղերի, ինչպես նաև պետության ու իրավունքի տեսության հետ: Իրավաբանական կոնֆլիկտաբանությունը ուսումնասիրում է իրավունքի և պետության տեսության տեսական և մեթոդոլոգիական միջոցների ողջ զինանոցը: Իրավաբանական կոնֆլիկտաբանությունը մի բնագավառ է, որի ուսումնասիրության առարկան են հանդիսանում իրավական կոնֆլիկտները, ինչպես նաև իրավական նորմերն ու ակտերը, որոնք որոշում են անհատների, սոցիալական հանրույթների, խմբերի, ինստիտուտների, կազմակերպությունների իրավական կարգավիճակը կոնֆլիկտային իրավիճակի համատեքստում [4]: Իրավաբանական կոնֆլիկտաբանությունը ընդհանրացնում և ուսումնասիրում է

այն առանձնահատկությունները, որոնք բնութագրում են կոնֆլիկտը իրավունքի տեսանկյունից: Նմանատիպ մոտեցման տեսական նշանակությունն այն է որ հնարավոր է դառնում կոնֆլիկտների ուղեկցումը պետական ինստիտուտների հետ, որոնցից մեկն իրավունքն է, հետևաբար և կոնֆլիկտների դիտարկումը ոչ վերացական սոցիալական տարածքում, այլ իրական կապի մեջ գործող իրավական կառույցների հետ: Այստեղից էլ բխեցվում է նմանատիպ մոտեցման գործնական իմաստը, պարզել՝ կարո՞ղ են արդյոք իրավական նորմերը նպաստել իրավական կոնֆլիկտների առաջացմանը, զարգացմանն ու լուծմանը, և եթե այո, ապա ինչպես բարձրացնել այդ ազդեցության արդյունավետությունը: Ուստի, նախ և առաջ, հարկ է հստակեցնել, թե կոնֆլիկտի ինչպիսի տարրերը կարող են կրել իրավական բնույթ, և որ կոնֆլիկտն է համարվում իրավաբանական: Ծանոթանացումը կոնֆլիկտների ամենատարբեր տեսակների հետ հանգեցնում է այն եզրակացության, որ իրավական տեսանկյունից դրանք ևս միատեսակ չեն: Առավել հստակ իրավական բնույթն արտահայտված է այն կոնֆլիկտներում, որոնք առաջանում ու զարգանում են պայմանավորված երկու կամ ավելի իրավական նորմերի միջև առկա իրական հակադրությամբ, որը վերաբերում է միևնույն առարկային: Մրանք իրավական կոնֆլիկտներ են բառի ամենալիստ և նեղ իմաստով: Այս կոնֆլիկտներում հակամարտող կողմերի հետաքրքրություններն ու դրդապատճառները բնորոշվում են իրավական նորմերի իմաստով և նշանակությամբ, ինչով էլ ուղղակիորեն պայմանավորված են մասնակիցների գործողությունները:

Վ.Ն. Կուդրյավցևը գտնում է, որ գոյություն ունեն կոնֆլիկտը իրավաբանական համարելու երկու այլընտրանքներ՝ կամ կոնֆլիկտի բոլոր տարրերը (դրդապատճառ, մասնակիցներ, օբյեկտներ)

պետք է ունենան իրավաբանական բնույթ, կամ բավական է, որ իրավական տարր պարունակի դրանցից որևէ մեկը: Հեղինակը առավել հակված է երկրորդ տարբերակին, նշելով, որ իրավաբանական պետք է համարել ցանկացած կոնֆլիկտ, որում վեճը, այսպես թե այնպես, կապված է կողմերի իրավական հարաբերությունների (նրանց իրավաբանորեն նշանակալի գործողությունների ու վիճակների) հետ: Իրավաբանական կարելի է համարել նաև ցանկացած միջպետական կոնֆլիկտ, ինչպես նաև բախումն այն կողմերի հետ, որոնք պայմանագրով կապված չեն, որովհետև ցանկացած պետությունների հարաբերությունները կարգավորվում են միջազգային իրավունքի նորմերով: Իրենց բնույթով իրավաբանական են համարվում աշխատանքային, մի շարք ընտանեկան, արտադրական, կենցաղային և միջազգային կոնֆլիկտները, եթե նրանք շոշափում են երկրի սահմանադրությունը, շրջանների ու ղեկավարության ճյուղերի միջև պայմանավորվածությունը, ազգերի ու ազգությունների կարգավիճակը: Շատ կոնֆլիկտներ էլ խորթն են և պարունակում են ինչպես իրավական, այնպես էլ ոչ իրավական տարրեր: Այլ կերպ ասած՝ ոչ բոլոր կոնֆլիկտներն են իրավաբանական, բայց գործնականորեն նրանցից յուրաքանչյուրը կարող է ավարտվել այս կամ այն իրավաբանական ընթացակարգով:

Իրավաբանական կոնֆլիկտը հատուկ տեղ է զբաղեցնում կոնֆլիկտների համակարգում: Մի շարք սոցիալ-հոգեբանական, սոցիալ-տնտեսական, էթնիկական և այլ կոնֆլիկտներ կարող են ստանալ իրավաբանական բնույթ: Կոնֆլիկտների շարքում առանձնացնում են իրավական և ոչ իրավական տարրեր, որոնք էլ հենց կարող են փոխել կոնֆլիկտի կառուցվածքը: Նմանատիպ կոնֆլիկտներն անվանում են խառը կոնֆլիկտներ: Ցանկացած պարագայում իրավաբանական կոնֆլիկտը ենթա-

դրում է կոնֆլիկտային հարաբերություններ և կոնֆլիկտային գործողություններ [5]: Կոնֆլիկտների կանխարգելման, հաղթահարման իրավաբանական հնարավորություններն ավելի լայն են, քան կոնֆլիկտի իրավական բնույթը, սակայն մեծամասամբ կոնֆլիկտում իրավաբանական միջամտության համար ի սկզբանե առկա են իրավական հիմքեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնֆլիկտը զարգացման միտում ունեցող երևույթ է՝ Վ.Ն.Կուդրյավցեվը առանձնացնում է նրա այդ գործընթացի մի քանի փուլեր՝

- մեկ կամ երկու կողմերի մոտ իրավաբանական բնույթի դրդապատճառների առաջացում.

- կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերի միջև իրավական բնույթի դրդապատճառների առաջացում.

- իրավական հարաբերությունների զարգացում՝ կապված իրավաբանական մարմնի կողմից գործի դիտարկման հետ: Այս փուլը կարող է տևական լինել և կրել տարաբնույթ փոփոխություններ.

- իրավական ակտի հրատարակում, որն ավարտում է կոնֆլիկտը: Կարող են ընդունվել մի քանի որոշումներ, որոնցից մեկը գործի վերանայումն է:

Իրավական կոնֆլիկտների զարգացումը, երբ նրանում մասնակցում են պետական իրավակիրառական օրգանները, միշտ ուղղված է օրենքի շրջանակներում և նրան համապատասխան կոնֆլիկտի լուծմանը, սակայն շատ դեպքերում իրավաբանական կոնֆլիկտն ուղեկցվում է բռնի, հարկադրական միջոցառումներով հանգուցալուծման ողջ ընթացքում: Այնպես որ՝ իրավաբանական կոնֆլիկտը չի կարելի դիտարկել որպես իրադարձությունների հանդարտ գործընթաց, ելնելով երկու տեսակետից՝

- լարվածությունը, հաճախ նաև բռնությունը տեղ ունեն բախվող կողմերի փոխհարաբերություններում:

- Նույնը, սակայն, այլ բովանդակությամբ և ուղղվածությամբ տեղի է ունենում իշխանական մարմիններից որևէ մեկի կողմից հակամարտող կողմի նկատմամբ: Թեև այն ընթանում է օրենքի շրջանակներում, սակայն վերածվում է հակադիր կողմերի միջև սուր պայքարի:

Անդրադառնալով իրավաբանական կոնֆլիկտների տիպաբանությանը՝ Վ.Ն.Կուդրյավցեվը դրանք բաժանում է համընդհանուր և տարածական, խմբային և միջանձնային, իրադրային, դիրքային, սուր, դանդաղ ընթաց, կրկնվող, հետաքրքրությունների և իմացական կոնֆլիկտների, սակայն իրավաբանական կոնֆլիկտի յուրահատկությունը բնորոշվում է իրավաբանական բնութագրիչով: Դրանց են պատկանում իրավունքի ճյուղը, որին վերաբերում է կոնֆլիկտը, կանոնի կառուցվածքը, իրավակիրառական հաստատության տարատեսակությունը և այլն: Հատուկ խումբ են կազմում միջազգային և ազգամիջյան կոնֆլիկտները, որոնք կարգավորվում են միջազգային իրավունքի նորմերով, պետական պայմանագրերով, ինչպես նաև ներքին, սահմանադրական օրենսդրությամբ: Կոնֆլիկտի հիմքում կարող է ընկած լինել իրավունքի ցանկացած նորմի տարբեր մեկնաբանությունը և ընկալումը՝ լիազորող, պարտադրող կամ արգելող:

Վ.Ն.Կուդրյավցեվը անդրադարձել է նաև կանոնակարգող-իրավական ոլորտում առկա կոնֆլիկտներին: Այս ոլորտի կոնֆլիկտները տարբերվում են իրավաբանական կոնֆլիկտների մյուս տեսակներից իրավաբանական հակասություններով: Դրանք առաջանում են ոչ միայն իրավաստեղծ, այլև իրավակիրառական գործընթացներում, արտահայտում են իրավունքի գոյության ներքին յուրատիպ շրջանը, դրա զարգացման և գործառնության տեխնոլոգիան: Այս տիպի կոնֆլիկտների բախման օբյեկտը իրավական գործերի ու կանոնակարգերի հակասություններն են: Նման կոնֆլիկտները կարող են ծագել նաև իրավաբանական կոնֆլիկտներից, որոնք կարգավորվում են միջազգային իրավունքի նորմերով, պետական պայմանագրերով, ինչպես նաև ներքին, սահմանադրական օրենսդրությամբ: Կոնֆլիկտի հիմքում կարող է ընկած լինել իրավունքի ցանկացած նորմի տարբեր մեկնաբանությունը և ընկալումը՝ լիազորող, պարտադրող կամ արգելող:

Վ.Ն.Կուդրյավցեվը անդրադարձել է նաև կանոնակարգող-իրավական ոլորտում առկա կոնֆլիկտներին: Այս ոլորտի կոնֆլիկտները տարբերվում են իրավաբանական կոնֆլիկտներից իրավաբանական հակասություններով: Դրանք առաջանում են ոչ միայն իրավաստեղծ, այլև իրավակիրառական գործընթացներում, արտահայտում են իրավունքի գոյության ներքին յուրատիպ շրջանը, դրա զարգացման և գործառնության տեխնոլոգիան: Այս տիպի կոնֆլիկտների բախման օբյեկտը իրավական գործերի ու կանոնակարգերի հակասություններն են: Նման կոնֆլիկտները կարող են ծագել նաև իրավաբանական կոնֆլիկտներից, որոնք կարգավորվում են միջազգային իրավունքի նորմերով, պետական պայմանագրերով, ինչպես նաև ներքին, սահմանադրական օրենսդրությամբ: Կոնֆլիկտի հիմքում կարող է ընկած լինել իրավունքի ցանկացած նորմի տարբեր մեկնաբանությունը և ընկալումը՝ լիազորող, պարտադրող կամ արգելող:

լիկտներում միշտ գործում է իրավաբանական անձը: Սրանք առանձնահատուկ են իրենց թիրախային բնույթով: Հաճախ հակասություններ են առաջանում որևէ կանոնակարգի նկատմամբ տարբեր պաշտոններ զբաղեցնող սուբյեկտների, պետական կառավարման մարմինների ոչ միանշանակ վերաբերմունքի և դիրքորոշման պատճառով:

Կանոնակարգային-իրավաբանական կոնֆլիկտը երկակի բնույթ է կրում: Առաջին հերթին, այն կարող է ծագել հենց այս ոլորտում, երբ նրա կենտրոնում են գտնվում պետաիրավական երևույթները: Երկրորդ՝ այն կարող է պատճառ հանդիսանալ, մեկ այլ իրավաբանական կոնֆլիկտի բաղկացուցիչ մաս կազմել, ինչպես նաև հանդես գալ որպես ավելի ընդհանուր կոնֆլիկտային իրադրության տարր: Տարբեր իրավական հայացքները, արտահայտելով իրավագիտակցության և իրավական մշակույթի ոչ միևնույն մակարդակ, խթանում են ապագա իրավաբանական կոնֆլիկտների առաջացումը:

Առաջին հայացքից կանոնակարգային-իրավական կոնֆլիկտները իրենցից ներկայացնում են իրավական գործերի արտաքին բախում, սակայն դա այնքան էլ այդպես չէ, քանի որ դրանց շարժումը կառավարում են մարդիկ, խմբերը, կուսակցությունները: Այս կոնֆլիկտների առավել բնորոշ դրսևորումներն են՝ իրավական գործի կանոնակարգերի միջև հակասությունները, որոնք դրանք տարբեր կերպ մեկնաբանելու առիթ են հանդիսանում: Դրանք են՝

- անհամապատասխանությունը պետության սահմանադրության և տարբեր շրջանների կանոնադրությունների միջև.

- օրենքների հեռացումը սահմանադրության տառից.

- նախագահի հրամանների և օրենքների միջև հակասությունը.

- հակասությունները օրենքների և ենթաօրենսդրական լրացումների միջև.

- օրենսդրության տարբեր ձյուղերի միջև հակասությունները.

- միջազգային իրավունքի ընդհանուր կանոնակարգերի, միջպետական պայմանագրերի ու ազգային օրենսդրության միջև հակասությունները [6]:

Գրեթե յուրաքանչյուր իրավաբանական կոնֆլիկտ կարող է վերաճել սահմանադրականի: Այն կարող է արտահայտվել մարդու և ազգային փոքրամասնությունների իրավունքների զանգվածային խախտումներով: Վ.Ն.Կուդրյավցևը ընդգծում է, որ կան բավականին լուրջ հիմքեր՝ ձևավորելու կոնֆլիկտային իրավունքի ընդհանուր ընթացակարգային ձյուղ՝ ավելի լայն ծավալով և բովանդակությամբ: Այն կարող է բաղկացած լինել առաջին հերթին՝ իրավական համակարգի ներսում խախտված կապերի վերականգնման վերաբերյալ սկզբունքներից և տեխնոլոգիական համակարգերից, երկրորդ՝ իրավունքի սուբյեկտների մտահասությունների միջև հակասությունների հաղթահարման նպատակով կիրառվող ենթաօրենսդրական լրացումներից, երրորդ՝ պահեստային կանոնակարգերից, չորրորդ՝ համաձայնեցնող գործընթացների տարբեր տեսակներից, հինգերորդ՝ հատուկ մարմինների գործառնություններն ու լիազորությունները սահմանող իրավական փաստաթղթերից:

Իրավական կոնֆլիկտներից զատ՝ հատուկ հետաքրքրություն են ներկայացնում հոգեբանական կոնֆլիկտները իրավակիրառական և մասնավորապես քննչական գործունեության ոլորտում: Այս ոլորտում կոնֆլիկտայնության հասկացությունը առաջին անգամ ներմուծել է Ա.Ռ.Ռատիսովը, որը, կատարելով կոնֆլիկտային իրավիճակների վերլուծություն հետաքննության փուլում, առանձնացրեց կոնֆլիկտային և ոչ կոնֆլիկտային իրադրություններ, որոնք պայմանավորված էին առաջին հերթին հետաքննության վարման մարտավարությամբ: Քննիչի գործունեու-

թյան հոգեբանական բնութագիրը ենթադրում է մասնագիտական կարևոր նշանակություն ունեցող բաղադրիչների բացահայտում: Վ. Լ. Վասիլևը քննիչի մասնագիտական գործունեության ոլորտում առանձնացնում է հասարակական, որոնողական, վերականգնողական, հաղորդակցական, կազմակերպչական և հաստատող կողմերը, որոնք միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են [7]: Բազմաթիվ քրեագետների և քրեահոգեբանների կարծիքով՝ քննչական գործունեության հիմնական նպատակն է հասարակության բացարձակ արժեքների իրավա-

կան պաշտպանությունն, օրինականության հաստատումը, նախաքննության փուլում իրավախախտումների բացահայտումը, մեղադրանք առաջադրելը, մեղադրվորներին, քրեական, քաղաքացիական և վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով դատական համապատասխան մարմնի դատին ներկայացնելը: Այսպիսով՝ քննիչի հոգեբանական և մասնագիտական առանձնահատկությունները պայմանավորված են քննչական գործունեության հասարակական—քաղաքական, բարոյական և հոգեբանական առանձնահատկություններով:

ՊԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Выготский Л.С. Исторический смысл психологического кризиса. М., "ЭКСМО", 2000, 120с. (стр. 10).
2. Агеев В.С. Межгрупповое взаимодействие: социально-психологические проблемы-М.: Изд во Моск. университета, 1990-240с.
3. Будякова Т.П. Индивидуальность потерпевшего и моральный вред. Издательство: Юридический центр Пресс, 2005г. 245с.
4. Практика уголовного сыска. Научно-практический сборник: составитель А.Ваксян – М.: Лига Разум, -244с.
5. Муздыбаев К.Л. Психология ответственности.Л.: 1992-342с.
6. Новик Ю.И. Психологические проблемы правового регулирования. Мн.: 1989-365с.
7. Аминов И.И. Юридическая психология: учебник для вузов: Изд во: Омега-Л 2011.

ПЕРСПЕКТИВЫ ИССЛЕДОВАНИЙ КОНФЛИКТОВ В ЮРИДИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

ՏՐԵՍՅԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Проректор по учебно-научной работе Армянского государственного педагогического университета им. Хачатуря Абовяна, доктор психологических наук, профессор

ՐԱԲԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Соискатель кафедры развития и прикладной психологии Армянского государственного педагогического университета им. Хачатуря Абовяна

В статье рассмотрены возможности исследований проблематики конфликта в области юридической деятельности, дан сопоставительный анализ типов конфликта, особенностей протекания и возможностей предотвращения развития конфликтного процесса.

CONFLICT RESEARCH OUTLOOKS IN THE SPHERE OF LEGAL ACTIVITY

SRBUHI GEVORGYAN

*Armenian State Pedagogical University After Kh. Abovyan, Vice-Rector For Academic Affairs,
Doctor Of Pedagogy, Professor*

RUBEN MKRTCHYAN

*Post Graduate Student of the Chair of Applied Psychology of the
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan*

The article discusses possible issues of conflict studies in the field of legal activity. The comparison of the analysis for the types of conflicts, especially the flows of preventing the possible development of conflict processes has been put forward.